

POLITICAL CONCEPT OF YEGHISHE

Karlen Mirumyan

*Doctor of Philosophy, Professor,
Leading Researcher of the Institute of Philosophy,
Sociology and Law of NAS RA*

SUMMARY

The article is devoted to the study of the political concept of the famous Armenian thinker and historian of the 5th century: Yeghishe. The article shows that the core of Yeghishe's political views is the concept of the national liberation struggle of the Armenian people, which receives political, legal, socio-philosophical and moral-psychological justification. An assessment is given of some conceptual ideas of the thinker, such as: the correlation of physical and spiritual freedom, pagan and Christian laws. It is emphasized that Yeghishe, in fact, for the first time, before Pope Gelasius I, formulated the concept of “two swords”.

Keywords: power, law, legal and illegal power, justice, spiritual freedom, national unity.

ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ ՍՄԲԱՏ ՄՊԱՐԱՊԵՏԻ «ԴԱՏԱՍՏԱՆԱԳՐՔՈՒՄ»

Լիլիթ Սարվազյան

*Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի ավագ գիտաշխատող*

Կիլիկիայի Հայկական թագավորության պետական-քաղաքական գործիչ, դիվանագետ, օրենսգետ և պատմիչ Սմբատ Մպարապետը (1208-1276)՝ մեծարվել է *«Նորբաժիտ փիլիսոփա»*, *«Մաքառ քաջ»*, *«Հայոց իմաստուն սպարապետ»*, *«Մեծն իշխան»* տիտղոսներով: Նա իր օրենսդրական և թարգմանչական գործունեությամբ մեծ ներդրում ունի հայ իրավունքի պատմության մեջ:

«Դատաստանագիրքը» («Յաղագս դատաստանաց թագաւորաց» կամ «Օրէնք և կանոնք ընդհանրական եկեղեցականաց և աշխահականաց») Սմբատ Սպարապետի գլուխգործոցն է՝: Այն կազմվել է 1265թ.՝ Գիլիկյան Հայկական թագավորությունում հասարակական-քաղաքական, տնտեսական և իրավական հարա-բերությունները կարգավորելու նպատակով: Դատաստանագիրքը բաղկացած է Առաջաբանից, ութ գլխից, որոնք ներառում են 202 հոդված²:

Հատկանշական է, որ Առաջաբանը Սպարապետը սկսում է Աստվածահայր Դավթի պատվիրանով. «Երանելի է անբիծների ճանապարհը, ովքեր առաջնորդվում են Տիրոջ օրենքներով»³: Ելնելով հայոց պետության մեջ օրենքների և արդարության պահպանման անհրաժեշտությունից՝ նա գրում է. «Եվ ահավասիկ, գրեցի այս դատաստանագիրքը ի հաստատություն Սուրբ Եկեղեցու և ի նպաստ պետության հարատևության, ապա աշխարհական դատավորների և թագավորների օգտագործման համար»⁴:

Ինքնիշխան պետության մեջ Սմբատը պատշաճ է համարել օրենքները սահմանել հետևյալ դասակարգությամբ. նախ՝ «ի վերուստ ընտրված դատավորների»՝ թագավորների լիազորություններն ու արդարադատությունը (պատժական օրենքները), ապա եկեղեցականների, աշխարհականների, ամուսնության և ժառանգորդման խնդիրները: Ըստ ծագման՝ իրավունքը նա բաժանում է երեք տեսակի՝ տերունական (աստվածային) իրավունք, աշխարհիկ իրավունք և կանոնական իրավունք: **Տերունական** իրավունքը մշտնջենական է, հավիտենական, ուստի՝ օրենքների հիմքն է: Այն տրված է Աստվածաշնչում: **Աշխարհիկ** օրենքները տերունականի արտացոլումն են: Օժտված լինելով հարկադրանքի ուժով՝ դրանք կոչված են՝ կարգավորելու աշխարհիկ հարաբերությունները: **Կանոնական** իրավունքը առաքելական եկեղեցու և հայրաբանների ընդունած կանոններն են, որոնք կարգավորում են հոգևորականության վարքագիծը, եկեղեցի-ժողովուրդ հարաբերակցությունը, ամուսնա-

¹ Դատաստանագիրք **Սմբատ Իշխանի** (Գունդեստաբլի) (Գիլիկյան Դատաստանագիրք XIII դարի) / Ձեռագրերի համեմատ. և առաջ.՝ Ա. Վրդ Լյուճեան, Ս. Էջմիածին, 1918:

² Տես՝ **Սմբատ Սպարապետ**, «Դատաստանագիրքը» // Ավագյան Ռ., Հայ իրավական մտքի գանձարան, Գիրք 1, Հավելված XI, Եր., 2001, էջ 561-643:

³ Նույն տեղում, Առաջաբան, էջ 561:

⁴ Նույն տեղում, էջ 563:

ընտանեկան հարաբերությունները: Մյուս կողմից՝ կանոնական իրավունքը կոչված է «բուժել» այն հանցագործներին, ովքեր մեղանչել, գղջացել են իրենց արարքների համար:

Իշխանության պետական և եկեղեցական ձևերին համապատասխան՝ Սմբատ Սպարապետն ընդունում է դատական իշխանության երկու ձև՝ **պետական** (թագավորական) և **եկեղեցական** (հոգևոր): **Արդարադատությունը կենտրոնացած է պետական-թագավորական իշխանության ձեռքում:** Դատական իշխանության կրողը թագավորն է և նրա տեղակալը՝ մեծ իշխանը: Հոգևոր իշխանությունը ենթակա է պետական իշխանությանը, որն էլ ուղղորդում էր արդարադատությունը: Եկեղեցին վարում էր սոսկ կրոնին, բարոյականությանը, ամուսնությանն ու ընտանիքին առնչվող գործերի քննությունը:

Հայոց թագավորության և իշխանապետությունների առկայության պարագայում **աշխարհիկ** դատարաններն ունեին առաջատար դեր, որովհետև դատավորներն աշխարհիկ իշխանության կրողն էին, աշխարհիկ իշխանություններն էին տնօրինում հարկադրամիջոցները և առաջին հերթին՝ ռազմական ուժը: Օտար տիրապետության պարագայում երկրի այն մասերում, որտեղ գործունակ էին հայկական իշխանությունները, դատական իրավագործությունը նույնպես բաժանված էր աշխարհիկի և հոգևորի, թեև կաթողիկոսի դատարանը որոշակի գերակայություն ուներ: Հոգևորականությունը դառնում էր դատական իշխանության բացարձակ կրող միայն այն դեպքում, երբ բացակայում էր ազգային աշխարհիկ իշխանությունը:

Հարկ է նշել, որ և՛ Մխիթար Գոշի, և՛ Սմբատի Դատաստանագրքերում, ինչպես նաև հին ֆրանսերենից Սմբատի թարգմանած «Անտիոքի ասիզներում»⁵ **«դատարան»** հասկացության փոխարեն կիրառվում են **«թագավոր», «իշխան», «եպիսկոպոս»** և արդարադատությունն իրագործող այլ սուբյեկտների անվանումները:

Իշխանապետության շրջանում Կիլիկիայում կառավարում էր մեծ իշխանը: Այս պաշտոնը պահպանվեց նաև թագավորական իշխանության օրոք, և մեծ իշխանը համարվում էր թագավորի պարտականությունները կատարող՝ նրա բացակայության ժամանակ: Սմբատը «Դատաստանագրքում» ամրագրեց այն սկզբունքը, ըստ որի՝

⁵ Stu` Assises D'Antioche (Անսիզ Անտիոքայ) / Reproduites en Francais.- Venise, 1876: Stu նաև՝ Ալիշան Հ., Ղևոնդ Վ.Մ., Հայապատում, Մասն Ա, Վենետիկ, 1901, էջ 111:

դատական գերագույն իշխանության կրողը թագավորն է: Նա արդարադատության պետական քաղաքականությունը, դատական գերագույն իշխանությունն իրականացնում էր **դատական բազմաստիճան համակարգի** միջոցով:

Պետական դատարաններն են. ա) թագավորի դատարան, բ) թագավորին առընթեր դատարան, գ) մեծ իշխանի դատարան, դ) Սիսի արքեպիսկոպոսի դատարան, ե) պարոնի դատարան, զ) ստորին դատարաններ (գավառական, քաղաքային, գյուղական): Դատական իրավասությամբ **եռաստիճան համակարգ** են կազմում. 1) թագավորի և մեծ իշխանի դատարանը, 2) իշխանական դատարանը 3) ստորին դատարանները:

Սմբատը սահմանել է ընդդատության հետևյալ սկզբունքը. **հավասարներին դատում են հավասարները, և վերադասները դատում են ստորադասներին.** «Իշխաններին դատում է իշխանաց իշխանը՝ իշխանների հետ և նրանց հավանությամբ, նույնը և ազատներին, որ մեր հեծյալներն ու լիճ ճորտերն են՝ իրենց հավասարների հետ. պետք է դատեն իշխանաց իշխանների, իսկ թագավորի ավատառուներին՝ թագավորի հրամանով»⁶: Նույն կերպ՝ մյուս դասերն «...իրենց համապատասխան դատարանում պետք է դատեն իրենց ենթականերին, ինչպես ցած կրտսեր ասպետներին՝ նրանցից վեր եղողները, որոնք ազատ են կոչվում»: Բայց, առանց թագավորի կամ իշխանաց իշխանի հրամանի՝ մարմնական պատիժների և մահապատժի չպետք է ենթարկեն, քանզի «...օրենքը երբեք իրավունք չի տալիս որևէ մեկին՝ կործանել կամ խեղանդամ դարձնել հանցավորին, բացի թագավորից և իշխանաց իշխանից»⁷: Նրանց թույլատրվում է մեղավորներին բանտարկել, տուգանել և վտարել երկրից: Ստորին դասին՝ շինականներին կարող են դատել հեծյալները, բայց հայրենական տարածքից զրկել չեն կարող՝ առանց պարոնի հրամանի:

Ընդդատության նույն սկզբունքով Սմբատը սահմանում է նաև **հոգնորականներին** դատելու կարգը. «Եպիսկոպոսը կարող է քահանային ու սարկավագին դատել և կարգալույծ անել: Սարկավագները...քահանաների...կողմից են դատվում ու արքայորվում:

⁶ **Սմբատ Մպարապետ**, «Դատաստանագիրքը» // Ավագյան Ռ., Հայ իրավական մտքի գանձարան, Գիրք 1, հոդ. 76:

⁷ Նույնը:

Եպիսկոպոսները կաթողիկոսների կողմից են դատվում, իսկ կաթողիկոսները... այն եպիսկոպոսների կողմից, ովքեր նրանց կաթողիկոս են ընտրել, վարդապետները՝ ռաբունապետի և իրենց իշխանություն և վարդապետության աստիճան տվողների կողմից... Վարդապետը կարող է հոգևոր բոլոր դասերի ներկայացուցիչներին տուգանել՝ մեղքեր գործելու համար...»⁸:

Աշխարհիկ դատական իրավասության բարձրագույն աստիճանը թագավորական դատարանն է, իսկ հոգևոր դատական իրավասությանը՝ կաթողիկոսի դատարանը:

Թագավորական գերագույն դատարանն առաջին աստիճանի դատարան էր, որտեղ քննվում էին հայրենիքի դավաճանության, գանձագործության, դիտավորյալ սպանության և ծանրագույն այլ հանցագործություններ: Վերջինների թվին են դասվում պետական օրենքների խեղաթուրումն ու սխալ կիրառումը, դատավորին չենթարկվելը, սրբապղծությունն ու աստվածամարտությունը, որոնց համար սահմանվում է մահապատիժ: Թագավորին և իշխանաց իշխանին էր պատկանում **մահվան դատավճռի իրավունքը**: Իշխաններն իրավունք ունեին մահապատժի վճիռ արձակել միայն այն դեպքերում, երբ ստանում էին թագավորի ուղղակի լիազորությունը կամ գործում՝ որպես նրա փոխանորդ: Բայց նման իրավասությամբ օժտված էին միայն **արքայատոհմի** իշխանները. «Օրինական չէ, որ ամեն իշխան սպանելու իրավունք ունենա, դա թույլատրելի է միայն թագավորական հարստությանը պատկանող իշխաններին»⁹:

Թագավորական գերագույն դատարանը բարձրագույն աստիճանի էր ընդհանրապես քրեական բոլոր գործերի համար: Բանն այն է, որ երբեմն ստորադաս դատարաններում քննվում էին այնպիսի հանցագործությունների վերաբերյալ գործեր, որոնք մահապատժի կիրառման անհրաժեշտություն էին առաջացնում, և նման դեպքերում գործն անցնում էր թագավորական դատարանին: Այստեղ հիմնականում վճռվում էին խոշոր իշխաններին վերաբերող վեճերն ու քրեական գործերը:

⁸ Նույն տեղում, հոդ. 77:

⁹ Նույն տեղում, հոդ. 1: «Դատաստանագրքի» մի շարք հոդվածներում հիշատակվում են թագավորի կամ բարոնի դատարանները: Տես՝ հոդ. 1, 48, 49, 74, 76, 95, 130:

Մեծ իշխանի դատարանը փոխարինում էր թագավորի դատարանին՝ օժանդակելով վերջինի գործունեությանը: Մեծ իշխանի դատարանը ևս *առաջին ատյան* էր՝ ծանր հանցագործություններ քննելիս և *երկրորդ ատյան*՝ ստորին դատարանների նկատմամբ: Իշխանական դատարանները քննում էին գողության, կողոպուտի, խարդախության, մարմնական վնասվածք հասցնելու և այլ բնույթի քրեական գործեր¹⁰:

Միսի արքեպիսկոպոսի դատարանն առաջին ատյան էր օտարերկրացիների և հայերի միջև ծագած քաղաքացիական գործերի համար: Ծովային տրանսպորտում հայերի և օտարերկրացիների միջև ծագած վեճերը, որոնք ենթակա չէին արքեպիսկոպոսի դատարանի իրավասությանը, քննում էին *դքսի (դուկի) դատարանը* և *պալլի դատարանը*: Երկու դատարանն էլ թագավորական էին, ընդ որում՝ առաջինի նախագահը սպարապետի ներկայացուցիչն էր, իսկ երկրորդինը՝ քաղաքագլուխը:

Բարոնի (պարոնի) կամ *մարզային* դատարանը քննում էր քրեական այն գործերը, որոնք ծագում էին բարոնության սահմաններում: Այն *առաջին ատյանի դատարան էր* տվյալ բարոնության ավատատերերի համար: Մարզային դատարանները քննում էին քաղաքացիական գործեր, այդ թվում՝ հայրենակալվածքներին վերաբերող գործերը:

Քաղաքային դատարանները (բուրջեսները) տեղական դատարաններ էին, որոնց անդամներին ընտրում էին քաղաքացիները: Դրանք քննում էին քաղաքաբնակների քաղաքացիական վեճերը և մանր հանցագործությունների վերաբերյալ գործերը՝ բացառելով ազնվականներին, որոնց գործերն անցնում էին մարզային դատարաններ: Ճորտ գյուղացիներին իրավունք ունեին դատել նրանց տերերը, ովքեր իրավասու էին մեղավորներին մարմնական պատիժների ենթարկել և արտաքսել:

Այդպիսով՝ *թագավորի դատական իրավասությունը տարածվում էր պետության ողջ բնակչության վրա՝ անկախ ազգային և կրոնադավանական պատկանելությունից*: Թագավորական դատարանին ենթակա էին ոչ միայն երկրի հպատակ մահմեդականներն ու ֆրանկները, այլև իտալական քաղաքներից

¹⁰ Տե՛ս՝ նույն տեղում, հոդ. 13, 128, 152, 156, 161, 166, 167:

եկած առևտրականները: Վերջիններս ստանում էին մենաշնորհային առևտրի արտոնագրեր, ունեին որոշակի ինքնավար իրավունքներ, իսկ եթե ծանր հանցագործություններ էին կատարում, ենթակա էին թագավորական դատարանին: Հայերի և օտարերկրացիների միջև ծագած վիճելի գործերը նույնպես քննվում էին հայկական դատարաններում¹¹:

Եկեղեցական-հոգևոր դատարաններն են. ա) կաթողիկոսի դատարան, բ) եպիսկոպոսի դատարան, գ) վարդապետի դատարան, դ) քահանայի դատարան:

Մմբատը հստակ տարբերակում է աշխարհիկ և հոգևոր դատարանների պատժիչ գործառույթները. «Կանոնները [հոգևոր դատարանները] և դատարանները [աշխարհիկ ատյանները] իրարից տարբերվում են նրանով, որ կանոնները բերդ են, և եթե [մեկը] իր մեղքի համար մեղանչելով՝ խոստովանում է, նրան թույլ են տալիս ապաշխարելով քավել իր մեղքն այնպես, ինչպես փրկվում է մահվանից, եթե բերդ է մտնում: Իսկ դատարանը մեղանչողի նկատմամբ ո՛չ քավություն է թույլ տալիս, ո՛չ էլ ներողամտություն»¹²: Այդպիսով՝ դատարանները կայացնում են **դատավճիռ**, իսկ հոգևոր դատարանները՝ **կանոնական վճիռներ**: Եկեղեցական դատավա-րութ-յունը օժանդակում է աշխարհիկ դատարանին և վերջինի լրացումն է: Եկեղեցական դատարաններն իրենց կանոնական կամ կարգապահական միջոցները կիրառում էին այն ժամանակ, երբ աշխարհիկ դատարանները չէին կիրառում պատիժներ:

Ըստ «Դատաստանագրքի»՝ եկեղեցական դատարաններն իրավասու են քննել.

• Պաշտամունքի հարցերի և հոգևոր անձանց միջև ծագած վեճերի վերաբերյալ գործերը: Հոգևորականների վերաբերյալ քրեական գործերը (սպանություն, գողություն, ապօրինի եկեղեցաշինություն և այլն) ենթակա են աշխարհիկ դատաստանին¹³: Պատժվում են նաև մեղավորների հանցակիցները. «Ով հակառակությամբ եկեղեցի շինի կամ անհնազանդությամբ քահանայություն անի, թող օձը նրան խայթի ու սպանի, իսկ նա ու նրա կամքը կատարողները պետք է զրկվեն

¹¹ Տես՝ **Սուքիասյան Ա.Գ.**, Կիլիկիայի Հայկական պետության և իրավունքի պատմություն (XI-XIV դդ.), Եր., 1978, էջ 362-363:

¹² **Մմբատ Սպարապետ**, «Դատաստանագիրքը», հոդ. 190:

¹³ Տես՝ նույն տեղում, հոդ. 11-13:

իրենց կարգերից և ենթարկվեն թագավորի ու պարոնի խիստ պատժին»¹⁴:

- Հայրապետի և եպիսկոպոսի դեմ ըմբոստանալու կամ նրանց անարգելու վերաբերյալ գործերը¹⁵:

- Սիմոնականության և սրբապղծության վերաբերյալ գործերը¹⁶:

- Հիվանդանոցների վրա ապօրինի հարկեր դնելու վերաբերյալ գործերը, քանզի օրենքը պատվիրում է. «Որտեղ էլ հիվանդանոցը լինի, բոլորովին չի թույլատրվում այնտեղից հարկ վերցնել. ո՛չ հիվանդից, ո՛չ նրան սպասարկող մարդուց, հակառակ դեպքում՝ դա կհամարվի Քրիստոսին կողոպտել»¹⁷:

- Հոգևոր-բարոյական նորմեր խախտած անձանց ամուսնա-ընտանեկան գործերը, քրեական կամ քաղաքացիական բնույթ ունեցող գործերը¹⁸:

- Այն հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերը, որոնք չեն սպառնում պետական անվտանգությանը, բայց պահանջում են կարգապահական և ուղղիչ միջոցների կիրառում: Այսպիսի դեպքերում մեծ նշանակություն ունեն եկեղեցու հեղինակությունը: Հատկանշական է, որ **հանցագործությունները կանխարգելելու** նպատակով՝ հոգևորականները խոստովանության ժամանակ իրավունք ունեն մերկացնել դեռևս գործողության չվերածված **զաղտնի** մտադրությունները. «...երկրում կատարված ծածուկ մեղանչումները խոստովանահայրերի ուղղելիք բանն է»¹⁹:

- Անզգուշության կամ հոգեկան խանգարման հետևանքով, ինչպես նաև ինքնապաշտպանության համար կատարված ոչ դիտավորյալ սպանությունները, որոնց համար նախատեսվում է ոչ թե քրեական պատիժ, այլ ապաշխարանք²⁰:

- Եկեղեցական դատավարությանը ենթակա է այն հանցագործը, ով զոջում է, և պատիժը փոխարինվում է ուղղիչ միջոցներով²¹:

¹⁴ Նույն տեղում, հոդ. 64:

¹⁵ Տես՝ նույն տեղում, հոդ. 14, 24:

¹⁶ Տես՝ նույն տեղում, հոդ. 47:

¹⁷ Նույն տեղում, հոդ. 44:

¹⁸ Տես՝ նույն տեղում, հոդ. 100, 101, 104, 162:

¹⁹ Նույն տեղում, հոդ. 1:

²⁰ Տես՝ նույն տեղում, հոդ. 22, 163, 180-181, 192, 196:

²¹ Տես՝ նույն տեղում, հոդ. 190:

Այդպիսով՝ **պետական դատարանների իրավասության ներքո են քրեորեն պատժելի հանցագործությունները, իսկ եկեղեցական դատարանին վերապահվում է ուղղիչ-դաստիարակչական գործառնությունը:**

Ի տարբերություն միջնադարյան օրենսգրքերի, մասնավորապես՝ Մխիթար Գոշի «Հայոց Դատաստանագրքի», Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքում» առանձին գլխով առանձնացված չեն **դատարանակազմության** ու **դատավարության** վերաբերյալ նորմերը: Հարկ է նշել, որ Կիլիկիայի Հայկական պետության դատական մարմիններն ու դատավարությունը համահունչ էին Բագրատունիների ժամանակաշրջանի դատական մարմիններին և դատավարությանը:

Մխիթար Գոշն իր «Դատաստանագրքի» Ներածության մեջ հանգամանալի շարադրում է դատական իրավունքի սկզբունքներն ու նորմերը²²: Սմբատի «Դատաստանագրքի» 11 գլուխներում էլ առկա են դատական իրավունքի նորմեր, որոնք վերաբերում են դատական իշխանությանը, դատարանի կազմին, ընդդատությանը, վկաների ներգրավմանը, ապացույցների ձեռքբերմանը և այլն:

Դատարանը կազմված էր նախագահից և երկու կամ ավելի դատական ատենակալներից: Թագավորական դատարանում նախագահում էին թագավորը, մեծ իշխանը և Միսի արքեպիսկոպոսը, իսկ իշխանական դատարաններում՝ բարոնի փոխանորդը («պայլը»), հոգևոր դատարաններում՝ կաթողիկոսն ու եպիսկոպոսը, քաղաքային դատարաններում՝ ընտրովի նախագահը:

Բացի դատարանի անդամներից, դատական համակարգում ներառվում էին **երդկյալ ատենակալները**, ովքեր աշխարհիկ բոլոր դատարաններում պարտադիր մասնակցում էին բոլոր գործերի քննությանը, ինչպես նաև **«նումիկոսը»** (նոտար, ատենադպիր), ով կազմում էր դատական արձանագրությունները: Դատավոր կարող էր լինել 25 տարեկանը լրացած, առաքինություններով օժտված պետության յուրաքանչյուր հպատակ (աշխարհական կամ հոգևորական): Դատավարությանը մասնակցում էր դատախազը

²² Մխիթար Գոշ, «Դատաստանագիրք Հայոցը» // Ավագյան Ռ., Հայ իրավական մտքի գանձարան, Գիրք 1, Նախաբան, Գլ. Դ-Թ, էջ 366-383:

(«հոգցող»): Թագավորական դատավորներն աշխատավարձ էին ստանում գանձարան մտնող դրամական տուգանքների 1/5 մասից:

Դատավարությունն անվճար էր, հրապարակային ու բանավոր: Գործը քննվում էր երկու կողմի ներկայությամբ, և որպես կանոն՝ ներկայացուցչություն չէր թույլատրվում: Գործերը հարուցվում էին մասնավոր մեղադրանքի կարգով, բայց, ըստ Սմբատի «Դատաստանագրքի», պետությունը հաճախ իր վրա էր վերցնում քրեական գործեր հարուցելու նախաձեռնությունը, հատկապես՝ այնպիսի դեպքերում, երբ սուժողն ի վիճակի չէր պաշտպանվել: Տեղական իշխանությունները պարտավոր էին հանցագործությունների համար վրեժխնդրությունն իրենց վրա վերցնել այն դեպքերում, երբ «բնական» (մասնավոր) մեղադրող չէր լինում: Ըստ օրենքի՝ «...երկրի բնակիչների հովանավորը պարոնն է, և նա, ով մի աղքատ բռնաբարի՝ քննության իրավունքը պարոնինն է»²³: Մեկ այլ հոդվածով արգելվում է այրի կնոջից պարտքի դիմաց գրավ վերցնել, որովհետև նրա պարտքը պետք է վճարվի դատարանի որոշմամբ, իսկ «...նա, ով ճնշում գործադրի, նա ոչ թե ճնշում գործադրած կլինի այդ կնոջ վրա, այլ դատարանի, քանզի յուրաքանչյուր այրի գտնվում է դատարանի հովանու ներքո»²⁴:

Սմբատը հիմնվում է Գոշի սահմանած **դատավարության սկզբունքի վրա**, ըստ որի՝ «...դատաստանը պետք է ճշմարտությամբ և իրավունքով լինի, այլ ո՛չ կաշառքով, և ո՛չ սուտ վկաներով, ո՛չ պատիր ճշմարտությամբ, ո՛չ մեռելներից կողոպտելով... ո՛չ անգիջում երդմամբ վարվելով և ո՛չ կեղծավորությամբ...»²⁵: Սպարապետն իր «Դատաստանագրքում» հռչակում է. **«Արդարադատության պաշտոններությունը թող երկրի կողմից հարգանք վայելի** (ընդգծումը.՝ Լ.Մ.)»²⁶: Ուստի՝ բացառում է կաշառքը, խաբեությունն ու խարդախությունը դատական գործընթացներում: Ժողովուրդը պետք է վստահի և՛ աշխարհիկ, և՛ հոգևոր դատաստանի արդարությանը:

Սմբատն **ապացուցման** հիմնական տեսակներ համարում է վկաների ցուցմունքը, գրավոր փաստաթղթերը և երդումը:

²³ Սմբատ Սպարապետ, «Դատաստանագիրքը», հոդ. 95:

²⁴ Նույն տեղում, հոդ. 131:

²⁵ Մխիթար Գոշ, «Դատաստանագիրք Հայոցը», Նախաբան, Գլ. Թ, էջ 384:

²⁶ Սմբատ Սպարապետ, «Դատաստանագիրքը», հոդ. 1, էջ 568:

Վկաների ցուցմունքը կարևորագույն և ամենահավաստի ապացույցն է: Վկայությունը կարող է լինել բանավոր և գրավոր: **Լիարժեք վկա** համարվում են չափահաս (25 տարեկանը լրացած) անձինք: Անչափահասներին ու ծերունիներին թույլատրվում է վկայությունը, բայց նրանք չեն ճանաչվում որպես լիարժեք վկա: Վկաները պետք է լինեն ողջախոհ, ճշմարտախոս, անկաշառ և ուղղահավաստ:

Ըստ Դատաստանագրքի՝ արժանահավատ է 2-3 վկայի ցուցմունքը. «Օրենքը թույլ չի տալիս հավատալ մեկ վկայի ասածին, քանի որ եղելությունը հաստատելու համար պահանջվում է երկու կամ երեք վկայի հաստատումը»²⁷: Մեկ հավատացյալի վկայությունն ընդունելի է միայն այն դեպքում, երբ «...Սուրբ եկեղեցին հաստատում է նրա ազնիվ մարդ լինելը»²⁸: Առհասարակ վկաներ չեն կարող լինել ստրուկները և թերահավատները. «Երբեք չպետք է ընդունել թերահավատ մարդկանց»²⁹: Օրենքը խստորեն պատժում է «սուտ» վկաներին, և եթե «...որևէ մեկի դեմ սուտ վկա հանդես գա, օրենքը պատվիրում է. այն տառապանքները, որ պետք է կրեր անմեղը՝ սուտ վկայության պատճառով, պետք է կիրառել սուտ վկայի նկատմամբ՝ մահապատիժ լինի, մարմնական վնասվածք, թե դրամական տուգանք»³⁰: Միայն խոստովանության դեպքում նա կազատվի նշված պատիժներից՝ կրելով կանոնական պատիժներ:

Գրավոր ապացույցները կարևոր նշանակություն ունեին, քանի որ պայմանագրերը կազմվում էին գրավոր: Իրեղեն ապացույցներ «Դատաստանագրքում» առանձնապես չեն նշվում:

Երդումը՝ որպես ապացույցի տեսակ կիրառվում է բացառիկ դեպքերում, երբ վկաներ չեն լինում: Ինչպես Գոշը, Սմբատը ևս չէր ընդունում երդման չարաշահումները: Մանր վեճերում երդում առհասարակ չի թույլատրվում: Իսկ այն դեպքերում, երբ երդումը թույլատրվում է, երդվող անձը, որպես «մեղսալի արարք» կատարող, ենթակա է եկեղեցական ապաշխարանքի: Սուտ երդումը համարվում է հանցագործություն: Երդվել չի թույլատրվում հոգևոր անձանց,

²⁷ Նույն տեղում, հոդ. 190:

²⁸ Նույն տեղում, հոդ. 15:

²⁹ Նույնը:

³⁰ Նույն տեղում, հոդ. 190:

ապաշխարանքով պատժվածներին, հիվանդներին, ծերունիներին, հարկահավաքներին, հարքածներին և հանցագործներին:

Դատավարությունն ավարտվում է **դատավճռի** կայացմամբ: Այն տեղի է ունենում **դատաքննությունից** կամ **դատավորների խորհրդակցությունից** հետո: Դատավորը միայնակ չի կարող վճիռ կայացնել: Ուստի՝ Սմբատը կարգադրում է. «Թող վճիռներ չկայացվեն՝ առանց դատաքննության և վկաների»: Քանի որ օրենսգետն ընդունում է **աստվածային արդարադատությունը**, նա դատավորներին հորդորում է չհրապուրվել անցավոր վայելքներով և հիշել, որ «...ամեն մի անարդար դատավճռի համար պատասխան են տալու ճշմարիտ դատավորի՝ Քրիստոսի առջև: Այն ամենի համար, որ գործում եք այստեղ, այնտեղ ըստ այդմ վարձահատույց եք լինելու. թե՛ բարի, թե՛ չար»³¹: Նա իր օրենսգրքով ոչ միայն կարգավորում էր հայ հասարակության իրավահարաբերությունները, այլև քարոզում էր արդարության, բարեգործության, ճշմարտության սկզբունքները, համոզված լինելով, որ՝ **«Երանելի է անբիծների ճանապարհը, ովքեր առաջնորդվում են Տիրոջ օրենքներով»**³²:

Այդպիսով՝ Սմբատ Սպարապետի Դատաստանագիրքն արտացոլում է Կիլիկյան Հայկական պետության մեջ գործող քաղաքական և իրավական կարգը, դատական համակարգն ու օրենքների գործադրման հիմնարար սկզբունքները:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում վերլուծվում են Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքում» սահմանված դատական համակարգի իրավասությունները, դատական իշխանության գործունեության և դատավարության հիմնարար սկզբունքները: Ըստ Սպարապետի՝ դատական իշխանության գլխավոր գործառույթն արդարադատության ապահովումն է, իրավախախտումների կանխումը և հանցագործներին պատժելը: Արդարադատությունն իրականացվում է պատժիչ գերատեսչությունների միջոցով: «Դատաստանագրքում» Սմբատ Սպարապետը մեկնաբանում է դատական իշխանության երկու՝ պետական և եկեղեցական ձևերի իրավասություններն ու գործառույթները: Բարձրագույն դատական իշխանությունը թագավորն իրականացնում

³¹ Նույն տեղում, հոդ. 1:

³² Նույն տեղում, Առաջաբան, էջ 561:

է բազմաստիճան դատական համակարգի միջոցով. 1) թագավորի և մեծ իշխանի դատարան, 2) իշխանական դատարան, 3) ստորին դատարաններ: Եկեղեցական դատարաններն են. ա) կաթողիկոսի դատարան, բ) եպիսկոպոսի դատարան, գ) վարդապետի դատարան, դ) քահանայի դատարան: Պետական դատարաններում քննվում էին քրեական և քաղաքացիական հանցագործությունները, իսկ եկեղեցական դատարաններն իրականացնում էին կանոնական կամ կարգապահական վճիռներ:

Բանալի բառեր. արդարադատություն, դատական համակարգ, դատավարության սկզբունքներ, պետական դատարան, եկեղեցական դատարան:

СУДЕБНАЯ СИСТЕМА И ПРИНЦИПЫ СУДЕБНОГО ПРОЦЕССА В СУДЕБНИКЕ СМБАТА СПАРАПЕТА

Лилит Сарвазян

*Кандидат философских наук, доцент,
Старший научный сотрудник Института
философии, социологии и права НАН РА*

РЕЗЮМЕ

В статье анализируются важнейшие полномочия судебной системы, принципы деятельности судебной власти и судебного процесса - выдвинутые в “Судебнике” Смбата Спарапета. Главной функцией судебной власти Спарапет считает обеспечение правосудия, пресечение правонарушений и наказание преступников. Правосудие осуществляется посредством органов наказания и исправления. В “Судебнике” Спарапет комментирует сущность и функции двух форм судебной власти: царской и церковной. Царь осуществляет верховную судебную власть посредством многоступенчатой судебной системы: 1) царский (верховный) и великокняжеские суды, 2) княжеский суд, 3) низшие суды (районов, городов и селений). К церковным судам относятся: а) католикосский, б) епископский, в) вардапетский, г) суд священника. В компетенцию государственных судов входят уголовно наказуемые преступления, а церковным судам вменяется оспаривательная функция.

Ключевые слова: правосудие, судебная система, принципы судебного процесса, государственный суд, церковный суд.

JUDICIAL SYSTEM AND LAWSUIT PRINCIPLES IN SMBAT SPARAPET'S "CODE OF LAW"

Lilit Sarvazyan

*Candidate of Philosophical Sciences, Associate Professor,
Senior Researcher of the Institute of Philosophy,
Sociology and Law of NAS RA*

SUMMARY

The article analyzes the jurisdictions of the judicial system, basic principles of judicial power and lawsuit presented in Smbat Sparapet's "Code of Law". According to Sparapet, the main function of the judicial power is to provide justice, prevent violations and punish criminals. Justice is administered through punitive bodies. In the "Code of Law" Smbat Sparapet interprets the jurisdiction and functions of two forms of the judicial power (state and church). The king exercises the highest judicial power through a multilevel judicial system; 1) the court of the king and the great ruler, 2) the court of the ruler, 3) the lower courts. The church courts are: a) the court of the catholicos, b) the court of the bishop, c) the court of the archimandrite, d) the court of the priest. The state courts were dealing with criminal and civil offenses, and the church courts enforced canonical or disciplinary judgments.

Keywords: justice, judicial system, principles of lawsuit, state court, church court.

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՈՎՀԱՆ ՈՐՈՏՆԵՑՈՒ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳՈՒՄ

Անուշ Մինասյան

*Փիլիսոփայական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի ավագ գիտաշխատող*

Բնագիտական հիմնախնդիրներին Հովհան Որոտնեցին (1315-1388) հիմնականում անդրադարձել է աստվածաշնչական հետևյալ երկու բնաբանների մեկնություններում (քարոզներում)՝ «Ի սկզբանէ Տէր զերկիր հաստատեցեր և գործք ձեռաց քոց երկինք են» [Սաղ.ՃԱ.26] և